Դ. Կարգ

Հայոց Նոր Տարին

Երնէկ թէ այս Նոր Տարին,
Վերջ տայ հայոց ցաւերին,
Չարը կորչէր ու բարին
Բոյն դնէր մեր սրտերին:

Երնէկ թէ այս Նոր Տարին,
Ազատ շնչէր Հայաստան,
Եւ շուրջ Մասիս մեր սարին
Փայլէին վարդ անդաստան:

Երնէկ թէ այս Նոր Տարին,
Հայ ազգ ի մի գումարուէր,
Եւ Կարնոյ Բերդի վրայ,
Հայոց դրօշակ ծածանէր:

Արի Նոր Տարի

Գիշերը նոր տարուայ երգեր են երգում
Աստղերն են փայլուն տօնածառը զարդարուն:
Արի նոր տարի, արի դու իմ բարի
Բոլոր երազանքները մեր կատարի:

Հեքիաթն է կանչում ձմեռ պապիկին
Ձիւնանուշն էլ մեզ ողջ հիւր կու գայ կրկին:
Արի նոր տարի, արի դու իմ բարի
Բոլոր երազանքները մեր կատարի:

Եւ այդ հեքիաթում կ'ապրեմ ես այս գիշեր
Փոքրիկ թզուկները բերում են նուէրներ:
Արի նոր տարի, արի դու իմ բարի
Բոլոր երազանքները մեր կատարի:

Վառենք եղեւնուն լոյսերը գոյնզգոյն
Վառենք մեր սրտերը որ լոյս լինի դրսում:
Արի նոր տարի, արի դու իմ բարի
Բոլոր երազանքները մեր կատարի: